

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՅՈՒՐԻԿ ԱՎԻՆՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՅ, «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-Ի,
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՎԱԶԳԵՆ ԴԱՆԻԷԼՅԱՆԻ ԵՎ ԷՐՆԵՍ ԴԱՆԻԷԼՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 4 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ
2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 6, 7 ՆՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԵԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հուլիսի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի,
Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նա-
յասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Յուրիկ
Ավինյանի եւ այլոց, «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի եւ
Էրնեստ Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՆՄ Ազգային ժողովի կողմից 2006 թվա-
կանի նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Նասարակության եւ պետության կարիքների
համար սեփականության օտարման մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի
3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7 հոդվածների՝ Նա-
յասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Յուրիկ Ավինյանի եւ այլոց՝ 31.03.2009թ. եւ «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, Վազգեն Դանիելյանի, Էրնեստ Դանիելյանի՝ 15.06.2009թ. դիմումներն են սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքն ընդունվել է Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2006 թվականի նոյեմբերի 27-ին, Նայասրանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի դեկտեմբերի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 30-ին:

2009 թվականի մայիսի 19-ին ընդունվել է ««Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասրանի Նանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՆՕ-121-Ն օրենքը, որով օրենքի 7 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը լրացվել են նոր պարբերությամբ, 3-րդ մասն առաջին նախադասությունից հետո լրացվել է նոր նախադասությամբ:

Դիմողները վիճարկում են «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի՝ 2006 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ փոփոխության արձանագրության դրույթները: Նաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացի Յուրիկ Ավինյանի եւ այլոց դիմումը քննության ընդունելու վերաբերյալ որոշումը կայացվել է մինչեւ վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունը, ինչպես նաեւ առկա չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 2-րդ կետի դրույթին համապատասխան գործի վարույթը կարճելու հիմքեր, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի վիճարկվող 7 հոդվածի նախկին խմբագրությամբ դրույթների սահմանադրականությանը:

Յու. Ավինյանի եւ այլոց դիմումը սահմանադրական դատարանն սկզբնապես ընդունել է քննության «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7 եւ 8 հոդվածների մասով: 2009թ. հունիսի

30-ի ՄԴԱՌ-60 աշխարհակարգային որոշմամբ սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթն այդ օրենքի 8 հոդվածի մասով՝ դիմողների նկատմամբ վերջնական դատական ակտով այն կիրառված չլինելու հիմնավորմամբ:

Սահմանադրական դատարանը քննությամբ չի անդրադարձել Յու. Ավինյանի եւ այլոց դիմումում բարձրացված՝ «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 18 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության խնդրին՝ վերջնական դատական ակտով դիմողների նկատմամբ այն չկիրառվելու հիմնավորմամբ:

«ԿԱՐ-ԱՎՏՈ» ՄՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի, Էրնեստ Դանիելյանի դիմումը սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը քննության է ընդունել «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 հոդվածի 1-ին մասի եւ 7 հոդվածի 1-ին մասի մասով:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ դիմումները վերաբերում են նույն հարցին, ՆՏ սահմանադրական դատարանը 2009թ. հունիսի 30-ին ընդունել է ՄԴԱՌ-60 աշխարհակարգային որոշումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 39 հոդվածի համաձայն նշված գործերը միավորելու եւ նույն դատական նիստում քննելու վերաբերյալ:

Դիմող կողմը միջնորդություն է ներկայացրել մինչեւ գործի դատաքննության ավարտը կատարել «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի գործողությունը: Սահմանադրական դատարանը բավարար հիմքեր չգտավ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 34 հոդվածի հիման վրա այդ օրենքի գործողությունը կատարելու համար:

2. «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի՝ «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքերն ու պայմանները» վերաբերողությամբ սույն գործով վիճարկվող 3 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է»:

Վերոհիշյալ օրենքի՝ «Բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշումը» վերաբերողությամբ 4 հոդվածի 1-ին մասը սահմանում է հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի

որոշման սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ գերակա հանրային շահով հեփապնդվող հնարավոր նպատակները:

Օրենքի՝ «Նասարակության եւ պետության կարիքների համար օտարվող սեփականության ձեռքբերողը» վերաբառությամբ 6 հոդվածը կարգավորում է հասարակության եւ պետության կարիքների համար օտարվող սեփականության ձեռքբերման հետ կապված հարաբերություններ, սահմանելով ձեռքբերող սուբյեկտներին, սեփականությունն օտարելու վերաբերյալ դիմումին ներկայացվող պահանջները եւ օտարմամբ պայմանավորված ծախսերի հատուցման ընդհանուր կարգը:

Օրենքի՝ «Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումը» վերաբառությամբ 7 հոդվածը (նախկին խմբագրությամբ) սահմանում է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմանը ներկայացվող պահանջները:

3. Գործի դատավարական նախապարմությունը վկայում է, որ ՆՏ կառավարությունը 2007 թվականի հունվարի 25-ին ընդունել է «Երեւան քաղաքի վարչական սահմաններում որոշ փարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, գերակա հանրային շահ ճանաչված փարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգը եւ նկարագրության արձանագրության օրինակելի ձեւը հաստատելու մասին» թիվ 108-Ն որոշումը: Ղեկավարվելով «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 4, 7 եւ 18 հոդվածներով, հիմք ընդունելով Երեւան քաղաքի գլխավոր հատակագիծն ու դրա հիման վրա առաջ եկած՝ քաղաքի զարգացման հեռանկարները՝ ՆՏ կառավարությունը հիշատակված որոշման 1-ին հավելվածում նշված փարածքներում իրականացվող քաղաքաշինական ծրագրերը ճանաչել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Սույն գործով դիմողներից Վազգեն Դանիելյանը, Էրնեստ Դանիելյանը, «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ն ՆՏ կառավարության վերոհիշյալ որոշումը մասնակի՝ Երեւան քաղաքի Ազաթանգեղոս փողոցում գտնվող արվեստանոցի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմում են ներկայացրել ՆՏ փնտեսական դատարան, որը ՆՏ դատական օրենսգիրքը գործողության մեջ դրվելու կապակցությամբ հետագայում հանձնվել է ՆՏ վարչական դատարանի քննությանը: Վարչական դատարանն իր՝ 05.08.2008թ. վճռով հայցը մերժել է, իսկ ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատն իր՝ 12.12.2008թ. որոշմամբ վերադարձրել է դիմողների վճռաբեկ բողոքը:

Սույն գործով մյուս դիմողները (քաղ. Յու. Ավինյան եւ այլոք) ՆՏ կառավարության վերոհիշյալ որոշումը ՆՏ մի շարք իրավական ակտերին հակասելու պարճառաբանությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմում են ներկայացրել Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարան, որն իր՝ 29.11.2007թ. թիվ 2-1660 վճռով մերժել է դիմումը: ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 23.04.2008թ. որոշմամբ մերժել է դիմողների վերաքննիչ բողոքը եւ Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի 29.11.2007թ. թիվ 2-1660 վճիռը թողել օրինական ուժի մեջ: ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատն իր՝ 29.09.2008թ. որոշմամբ վերադարձրել է դիմողների վճռաբեկ բողոքը:

4. Վիճարկելով «Նասարակության եւ պեպուռայան կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7 հոդվածների դրույթները, դիմողները գտնում են, որ դրանք չեն համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին, 31 հոդվածի 3-րդ մասին, 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին, 24 հոդվածին:

Օրենքի 3 հոդվածի 1-ին մասի վիճարկման առնչությամբ դիմողները, հղում կատարելով սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 9-րդ կետին, նաեւ գտնում են, որ վերոհիշյալ օրենքի 3 հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասին, քանի որ այն որպես հասարակության եւ պեպուռայան կարիքների համար գույքի օտարման հիմք համարում է «բացառիկ՝ գերակա հանրային շահը», այն դեպքում, երբ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ հասարակության եւ պեպուռայան կարիքների համար գույքի օտարման հիմքը «հասարակության եւ պեպուռայան կարիքների» առկայության փաստն է, իսկ «բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում» օտարումը, «օրենքով սահմանված կարգով» եւ «նախնական համարժեք փոխհատուցմամբ» օտարման վերաբերյալ սահմանադրական պահանջների հետ մեկտեղ, հանդիսանում է օտարվող գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտ երաշխիք, այլ ոչ թե օտարման սահմանադրական հիմք:

Օրենքի վիճարկվող 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի առնչությամբ դիմողները՝ հղում կատարելով սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 10-րդ կետին, գտնում են, որ օրենքի 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը հակասում են ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասին, քանի որ օրենքը «բացառիկ՝ գերակա հանրային շահ» հասկացությունը սահմանող եւ բացառիկ՝ գերակա հանրային

շահի հիմնավորման անհրաժեշտության պահանջի վերաբերյալ դրույթների հետ մեկտեղ պետք է պարունակեր նաև «հասարակության եւ պետության կարիքներ» հասկացությունը՝ որպես օտարման բուն հիմքը սահմանող եւ հասարակության եւ պետության կարիքների հիմնավորման անհրաժեշտության պահանջի վերաբերյալ դրույթներ:

Օրենքի 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի առնչությամբ դիմողները գտնում են նաև, որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին այնքանով, որքանով օրենքում բացակայում են «բացառիկ», «գերակա» եւ «հանրային շահ» եզրույթների սահմանումները եւ, այդպիսով, հակասում են ոչ միայն ՏՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին, 31 հոդվածի 3-րդ մասին, այլև՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին, «այնքանով, որքանով օրենքի անորոշ ձեւակերպումների վրա հիմնված՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն, իր հերթին, չի կարող բավարարել իրավական որոշակիության պահանջը, ինչը օտարվող գույքի սեփականափոխը կգրկի այդ որոշումը դատական կարգով վիճարկելու եւ իր խախտված իրավունքները վերականգնելու իրավունքներն արդյունավետորեն իրականացնելու հնարավորությունից»:

Օրենքի 6 հոդվածի առնչությամբ դիմողները՝ հիմք ընդունելով «հասարակության եւ պետության կարիքների» վերաբերյալ սահմանադրական դրույթի՝ Կրկնակի իրավահարաբերության կարգավորման բնագավառում ելակետային լինելը, գտնում են, որ օրենքի 6 հոդվածը հակասում է Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին եւ 31 հոդվածի 3-րդ մասերին, քանի որ օրենքում «հասարակության եւ պետության կարիքների»՝ որպես հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման սահմանադրական հիմքի վերաբերյալ դրույթի բացակայության պայմաններում խոսք չի կարող լինել սեփականության հարկադիր օտարման մասին:

Օրենքի 7 հոդվածի 1-ին մասի առնչությամբ հղում կատարելով սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման 10-րդ կետի 3-րդ պարբերությանը՝ համարելով, որ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի հարկադիր օտարման առաջնային նախապայմանը հասարակության եւ պետության կարիքների միաժամանակյա առկայության փաստն է, դիմողները գտնում են, որ «յուրաքանչյուր դեպքում բացառիկ՝ գերակա հանրային շահի ճանաչման հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հավասարաչափ՝ ինչպես պետության, այնպես էլ հասարակության կարիքներից», հետեւաբար, գտնում են, որ օրենքի 7 հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Օրենքի 7 հոդվածի 2-րդ մասի վիճարկման առնչությամբ դիմողները գտնուում են, որ այն հակասում է Սահմանադրության 3 հոդվածին, 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին, քանի որ՝ «Օրենքի նշված դրույթը կառավարությանը չի պարտավորեցնում հիմնավորել բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունը յուրաքանչյուր դեպքում, ինչը օտարվող գույքի սեփականատիրոջը գրկում է կառավարության որոշումը դարական կարգով վիճարկելու եւ իր խախտված իրավունքները վերականգնելու իրավունքներն արդյունավետ իրականացնելու հնարավորությունից»:

5. Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերում «օրենքով սահմանված կարգով» եւ օտարվող գույքի դիմաց «նախնական համարժեք փոխհատուցման»՝ Սահմանադրությամբ ամրագրված հասկացությունների բառացի բացակայությունը չի կարող հանգեցնել «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի եւ ՆՏ Սահմանադրության համապատասխան հոդվածի միջեւ հակասության, մասնավորապես այն հիմնավորմամբ, որ «սեփականության օտարման հիմք է ճանաչվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահը»: Ըստ պատասխանող կողմի՝ դիմողները վիճարկվող նորմից արհեստականորեն առանձնացրել են վերջինիս մի մասը՝ ցանկանալով փրկավորություն սրելով, որ առկա չեն Սահմանադրությամբ ամրագրված օտարման պայմանները, եւ այդ առումով գտնում է, որ օրենքով սահմանված կարգով իրականացված լինելը եւ նախնական համարժեք փոխհատուցում վճարելը հանդիսանում են օտարման ոչ թե հիմքերը, այլ պայմանները, հետեւաբար՝ ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի եւ վիճարկվող հոդվածի միջեւ հակասության մասին խոսք լինել չի կարող:

«Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի վիճարկվող 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի վերաբերյալ պատասխանող կողմը գտնում է, որ այդ հոդվածում հստակորեն փրված են այն չափորոշիչները, համաձայն որոնց՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարումը կարող է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվել, իսկ «պետություն», «հասարակություն», «կարիքներ» հանրաձայնությամբ ինչպես առանձին, այնպես էլ ընդհանուր օգտագործման դեպքում «նոր հասկացություն չեն բնորոշում եւ որեւէ նոր իմաստ չեն բովանդակում»:

Պատասխանողը գտնում է, որ հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում օրենսդրի համար դժվար է ընդունել «այնպիսի իրավական նորմեր, որոնք կգործեն երկարապես ժամանակահատվածում եւ համա-

պարփակ կկարգավորեն բոլոր հասարակական հարաբերությունները», բացի դրանից, «հասարակական երեւոյթները կարող են այնպիսի անկրկնելի հատկանիշներ ունենալ կամ արտահայտվել այնպիսի դրսեւորումներով, որ օրենքով հնարավոր չլինի համարժեքորեն կարգավորել այդ հարաբերությունները», եւ որ «ոչ միշտ է հնարավոր ընդունել խիստ որոշակի իրավական նորմեր»: Ներելաբար, ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը եւ հստակ կանոնակարգել իրավահարաբերությունների մասնակիցների վարքագիծը: Ուստի «օրենքի որոշակիությունը համարվում է ցանկալի, սակայն ոչ պարտադիր կողմ», հետելաբար՝ բացարձակ որոշակիության բացակայությունը ՏՏ Սահմանադրությամբ սահմանված իրավական պետության սկզբունքին օրենքը հակասող ճանաչելու հիմք չէ: Այդ հիմնավորմամբ պարասխանող կողմը գտնում է, որ «հանրային շահ», «գերակա» եւ «բացառիկ», ինչպես նաեւ «հասարակության եւ պետության կարիքներ» հասկացությունները լրացուցիչ սահմանման կարիք չունեն, եւ վիճարկվող օրենքի 6 հոդվածի՝ ՏՏ Սահմանադրությանը հակասելու՝ դիմող կողմի պնդումը նույնպես հիմնավոր չէ:

Վերոհիշյալ օրենքի վիճարկվող 7 հոդվածի 1-ին մասի առնչությամբ պարասխանող կողմը գտնում է, որ ՏՏ Սահմանադրության 85 հոդվածի 5-րդ մասի համաձայն կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Սեփականության օրարման նպատակը որպես բացառիկ գերակա շահ ճանաչելու՝ կառավարության լիազորությունը չի հակասում ՏՏ Սահմանադրության 42 հոդվածին, միաժամանակ, պետության եւ հասարակության կարիքների համար սեփականության օրարման գործընթացների մասնակիցներին իրենց իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ ու մարջելի իրավական մեխանիզմներ ունեն: Իսկ նույն հոդվածի 7-րդ մասում թվարկված միջոցառումների իրականացումը չի կարող դիտարկվել որպես սեփականության անարգել փնտրիման, փիրապետման եւ օգրագործման, բնակարանի, անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքների խախտում:

Այսպիսով, պարասխանող կողմը գտնում է, որ «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օրարման մասին» ՏՏ օրենքի վիճարկվող նորմերը համապարասխանում են ՏՏ Սահմանադրությանը:

6. Սույն գործով վիճարկվող իրավանորմերի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել.

- «Նասարակության եւ պեւոյթյան կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների համապարասխանությունը սեփականության օտարման հետ կապված հարաբերությունների ընթացիկ նորմատիվ իրավակարգավորման սահմանադրաիրավական սկզբունքների բովանդակության, դրանց օրենսդրական հստակ կարգի սահմանման եւ կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ այնքանով, որքանով առնչվում է սույն գործով վիճարկման առարկային,

- սեփականության օտարման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման եւ, մասնավորապես՝ այդ օտարումը որպես բացառիկ՝ գերակա հանրային շահ գնահատելու բնագավառում պեւոյթական լիազոր մարմնի լիազորությունների շրջանակը՝ այնքանով, որքանով այն անհրաժեշտ եւ բավարար է՝ ՆՏ Սահմանադրության 3, 5 հոդվածներում, 8 հոդվածի առաջին մասում, 14, 14.1., 31, 48 եւ 89 հոդվածներում ամրագրված սկզբունքների եւ նորմատիվ այլ դրույթների լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով,

- հասարակության եւ պեւոյթյան կարիքների համար օտարվող գույքի սեփականատիրոջ՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների եւ ազատությունների երաշխավորված պաշտպանության ապահովումն ինչպես սույն գործով վիճարկվող, այնպես էլ օրենսդրության այլ նորմերում,

- հասարակության եւ պեւոյթյան կարիքների համար գույքի օտարման հետ կապված վեճերի լուծման դատական պրակտիկան՝ այնքանով, որքանով առնչվում է սույն գործով վիճարկման առարկային:

7. Սեփականության իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման սկզբունքային նորմերը նախատեսված են ՆՏ Սահմանադրության 8 եւ 31 հոդվածներում, համաձայն որոնց՝ Նայաստանի Նանրապեւոյթությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը (իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու՝ սեփականատիրոջ իրավունքը), որից անձը կարող է զրկվել բացառապես դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում, իսկ սեփականության օտարումը հասարակության եւ պեւոյթյան կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

«Նասարակության եւ պեւոյթյան կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այդ օրենքը սահմանում է հասա-

րակության եւ պեւրության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհարուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը եւ դրա որոշման կարգը, այդպիսով՝ այն կոչված է նախատեսելու ՏՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի իրագործման պայմանները:

Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ իր՝ 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշմամբ մեկնաբանել է Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, հաշվի է առնում, որ «Հասարակության եւ պեւրության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՏՏ օրենքն ընդունվել է նաեւ սահմանադրական դատարանի այդ որոշման դրույթների իրագործմամբ: Արձանագրելով, որ դիմողներն իրենց փաստարկների համար հիմք են ընդունում սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման միայն 9-րդ կետի 9-րդ պարբերությունում ամրագրված իրավական դիրքորոշումը, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությունը հարկ է գնահատել սահմանադրական դատարանի այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների վերահաստատման եւ դրանց ամբողջության համադրության սկզբունքով:

Սույն գործի շրջանակներում վիճարկման առարկա հանդիսացող սեփականության օտարման իրավակարգավորման սկզբունքների եւ կարգի առնչությամբ սահմանադրական դատարանն իր որոշմամբ մասնավորապես կարելուրել էր.

ա/ ոչ միայն հասարակության եւ պեւրության կարիքների, այլ նաեւ բացառիկ՝ գերակա հանրային շահերի բավարարման անհրաժեշտությունը (որոշման 8-րդ կետի 5-րդ պարբերություն եւ 11-րդ կետի 4-րդ պարբերություն),

բ/ ոչ միայն հասարակության եւ պեւրության կարիքների առկայության հիմնավորման, այլեւ բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության եւ դրա հիմնավորման պահանջի բավարարումը (որոշման 10-րդ կետի 2-րդ եւ 3-րդ պարբերություններ):

Բացի դրանից, սահմանադրական դատարանը գտել էր նաեւ, որ.

ա/ «միայն մեկ դեպքում է հնարավոր սեփականության հարկադիր օտարումը՝ երբ առկա է բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակական եւ պեւրական կարիքը» (որոշման 11-րդ կետի 1-ին պարբերություն),

բ/ «հասարակության եւ պեւրության ամեն մի կարիք սեփականության օտարման հիմք չի կարող հանդիսանալ, այդ կարիքները պեւրք է լինեն բացառիկ՝ պայմանա-

վորված գերակա հանրային շահով» (որոշման 8-րդ կետի 6-րդ և 7-րդ պարբերություններ),

գ/ «միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորմամբ ի հայտ եկած հասարակական և պետական կարիքի դեպքում կարող է սեփականության հարկադիր օտարման խնդիր առաջադրվել» (որոշման 10-րդ կետի 14-րդ պարբերություն),

դ/ «օրենքը պետք է սահմանի, թե ինչպես որոշել հասարակական և պետական կարիքը, ինչպես է հիմնավորվում, որ դրա՝ համարժեք փոխհատուցմամբ բավարարումը թելադրված է բացառիկ՝ գերակա հանրային շահով» (որոշման 11-րդ կետի 4-րդ և 5-րդ պարբերություններ):

Նաշվի առնելով «Նասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՏՏ օրենքի իրավական կարգավորման նպատակը (օրենքի 1 հոդված), բացահայտելով օրենսդրի կամքը, վերլուծելով օրենքի և, մասնավորապես՝ դրա 4, 5, 7, 8, 9, 10 և 16 հոդվածների իրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը փորձել է վերոհիշյալ օրենքում արտացոլել սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և այդ դիրքորոշումների շրջանակներում սահմանել բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորման իրավական հիմքերը: Իսկ հասարակության և պետության կարիքների առկայությունը հիմնավորել է բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորման վերաբերյալ դրույթների շրջանակներում՝ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 10-րդ կետի 14-րդ պարբերությունում արտահայտած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հասարակության և պետության կարիքն ի հայտ է գալիս բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորմամբ: Մասնավորապես, սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 12-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ «միջազգային պրակտիկայում սեփականության օտարման համար հիմք են պետության և հասարակության այնպիսի կարիքները, ինչպիսիք են ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային տրանսպորտի նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, պարամաշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապարման և հասարակական ու պետական կարեւորության տարբեր այլ ծրագրերի իրականացումը: Սակայն բոլոր պարագաներում իրավական խնդիրն այն է,

որ օրենքով սահմանված կարգով ամեն մի կոնկրետ դեպքում հիմնավորվի ծրագրի այդպիսին լինելը եւ այդ մասին ժամանակին ու պարզաճ ձեով փեղեկացվեն շահագրգիռ անձինք՝ սրանալով իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորություն»։ Իրացնելով սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման 12-րդ կետի դրույթները՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի՝ «Բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշումը» վերաբառությամբ 4 հոդվածի 2-րդ մասը սահմանում է գերակա հանրային շահի այնպիսի նպատակներ, որպիսիք սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման 12-րդ կետում ամրագրված են որպես միջազգային պրակտիկայում ընդունված՝ պետության եւ հասարակության կարիքներ։

Դրանք են.

ա) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը.

բ) Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը.

գ) միջազգային եւ հանրապետական նշանակության պայմանության եւ մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաեւ բնության հատուկ պահպանվող փարածքների սպեղծման կամ պահպանության ապահովումը.

դ) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը.

ե) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաեւ գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը.

զ) Էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, փրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարեւոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը.

է) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը.

ը) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետեւանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացումը։

Նաշվի առնելով վերոգրյալը եւ վերահաստատելով իր՝ 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման 8-րդ կետի 5-րդ, 6-րդ եւ 7-րդ պարբերություններում, 10-րդ կետի 2-րդ, 3-րդ եւ 14-րդ պարբերություններում, 11-րդ կետի 1-ին, 4-րդ եւ 5-րդ պարբերություններում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանի

րանը գտնում է, որ «Նասարակության եւ պեպության կարիքների համար սեփականության օտարման մասին» Նայասարանի Նանրապեպության օրենքի 3 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Նասարակության եւ պեպության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է» դրույթը ներառում է բացառիկ՝ գերակա հանրային շահով պայմանավորված հասարակության եւ պեպության կարիքը: Տվյալ ձեւակերպման մեջ «հիմք» եզրույթը շեշտում է այն պայմանի առկայությունը, որի դեպքում է միայն հնարավոր սեփականության օտարումը: Իրավակիրառական պրակտիկան եւ ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի նշված դրույթի սահմանադրաիրավական այդ բովանդակությունից: Սույն գործով դիմող կողմի ներկայացրած դատական ակտերի ուսումնասիրությունն էլ վկայում է, որ հասարակության եւ պեպության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված վեճեր լուծելիս եւ վերոհիշյալ օրենքի դրույթները մեկնաբանելիս դատական պրակտիկան ըստ էության ձեւավորվում է սահմանադրական դատարանի իրավական վերոհիշյալ դիրքորոշումների շրջանակներում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքում առկա են հասկացութային որոշ անհստակություններ: Մասնավորապես, օրենքի անվանման մեջ ու բազմաթիվ հոդվածներում (1, 3, 4, 6, 11, 14, 18) առանց երկիմաստության խոսքը վերաբերում է հասարակության եւ պեպության **կարիքների համար սեփականության օտարմանը**: Դա միարժեք նշանակում է, որ հաշվի առնելով նաեւ ՏՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի պահանջը, սեփականության օտարումը հնարավոր է միայն մեկ նպատակ իրականացնելու՝ հասարակության եւ պեպության կարիքը բավարարելու համար: Սակայն, ինչպես ընդգծվել էր նաեւ ՍԴՈ-630 որոշման մեջ, հասարակության եւ պեպության ոչ բոլոր կարիքները կարող են սեփականության օտարման հիմք հանդիսանալ: Սահմանադրությունը կոնկրետ պայման է առաջադրում՝ դրանք հասարակության եւ պեպության այն **կարիքներն են**, որոնք միայն **պայմանավորված են բացառիկ՝ գերակա հանրային շահերով**: Նման հստակ սահմանադրաիրավական կարգավորման պայմաններում, օրենքի 7 հոդվածի 2-րդ մասի ա) կետում նշվում է, որ բացառիկ՝ գերակա հանրային **շահի համար** պետք է օտարվի սեփականությունը: Դա, իր հերթին, ելնում է օրենքի 4 հոդվածի 3-րդ մասի, 7 հոդվածի 2-րդ մասի ա) կետի այն ձեւակերպումներից, որոնցում բացառիկ՝ գերակա հանրային **շահի** եւ, դրանով պայմանավորված, հասարակության եւ պեպության **կարիքի** որոշ նույնականացում է նկատվում: Վերջինս, իր հերթին՝ «**դեպքում**» եւ «**համար**» եզրույթների ոչ համարժեք կիրառման արդյունք է: Այդուհանդերձ, օրենքի ու

նաեւ նշված հոդվածների այլ դրույթների ընդհանուր փրամաբանությունն այն է, որ սեփականությունը կարող է օտարվել հասարակության եւ պետության կարիքների համար:

Նաշվի առնելով վերջին հանգամանքը, այս հարցի առնչությամբ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ ՆՆ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, օրենքի ցանկացած դրույթի իրավակիրառական պրակտիկան պետք է ելնի այն սկզբունքից, որ չնայած փվյալ իրավակարգավորման շրջանակներում «հասարակության եւ պետության կարիքը» եւ «բացառիկ՝ գերակա հանրային շահը» հանդես են գալիս օրգանական մեկ միասնականության մեջ, այսուհանդերձ, բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունն այն **պայմանն** է, որի պարագայում հնարավոր է դառնում սեփականության օտարումը **պետության եւ հասարակության կարիքների համար**: Նման մոտեցումը նախ եւ առաջ ելնում է ՆՆ Սահմանադրության 1 հոդվածի, 2 հոդվածի 1-ին մասի, 3 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից, որի հիմնարար նշանակությունը կայանում է պետության եւ հասարակության շահերի միասնության, եւ միայն այդ շահերով պայմանավորված նպատակային խնդիրներ լուծելու իրավական պայմաններ ստեղծելու, ինչպես նաեւ՝ պետության եւ հասարակության միջեւ ներդաշնակ գործակցություն ապահովելու մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 4 հոդվածի 1-ին մասի ե) կետով, ինչպես նաեւ 9 հոդվածով նախատեսված հիմքերով դատական վեճի առկայության պայմաններում Սահմանադրության 6 հոդվածի 1-ին մասի, 31 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաեւ 3 հոդվածի 3-րդ մասի պահանջներից ելնելով **դատարանը պարտավոր է** պատասխան փակ հետեւյալ հարցերին. **նախ՝** փվյալ սեփականության օտարման առնչությամբ առկա՞ է հասարակության եւ պետության կարիքը, թե՛ ոչ, **երկրորդ՝** այդ կարիքը պայմանավորվա՞ծ է միայն բացառիկ՝ գերակա հանրային շահով, թե՛ ոչ: Այդ հարցերի պատասխանների առկայության պայմաններում կարող է հետագա գործընթացն օրենքով նախատեսված շարունակությունն ունենալ: Սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում նաեւ օրենքի 13 հոդվածի 4-րդ մասի երաշխիքային այն դրույթը, որ «...դատարանի վճռից ծագող պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ իրավունքները ծագում են միայն դրանց պետական գրանցման պահից»: Նման նորմատիվ պահանջի բացակայությունը նախկինում սեփականության իրավունքի խախտման լուրջ պարճառ էր դարձել:

8. «Նասարակության եւ պեւոյթյան կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 7 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ դիմողների փաստարկների առնչությամբ սահմանադրական դատարանը վերահաստատելով հիմք է ընդունում իր 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես, «բացառիկ», «գերակա» եւ «հանրային շահ» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 12-րդ կետի 2-րդ պարբերությունում:

Գերակա բնույթ ունեցող հանրային շահերի առաջնայնության որակների հստակեցման եւ հիմնավորման համար չափանիշներն ու սկզբունքները սահմանված են վերոնշյալ օրենքի 4 եւ 7 հոդվածներում, որպիսիք իրենց իրավական բովանդակությամբ համապատասխանում են սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

ՆՏ կառավարության «Երեւան քաղաքի վարչական սահմաններում որոշ փարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, գերակա հանրային շահ ճանաչված փարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգը եւ նկարագրության արձանագրության օրինակելի ձեւը հաստատելու մասին» 25.01.2007թ. թիվ 108-Ն, ինչպես նաեւ «Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող որոշ փարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» 20.11.2008թ. թիվ 1405-Ն որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ առաջնորդվելով «Նասարակության եւ պեւոյթյան կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 4 հոդվածում ամրագրված սկզբունքներով՝ ՆՏ կառավարությունը ոչ միայն որոշում է սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահը, այլեւ մատնանշում այն հետապնդող նպատակները:

Նասարակության եւ պեւոյթյան կարիքների համար օտարվող գույքի սեփականատիրոջ՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների եւ ազատությունների երաշխավորված պաշտպանության ապահովման փեսանկյունից սահմանադրական դատարանը կարելի է օրենքի 4 հոդվածի 1-ին մասի «ե» կետում եւ 9 հոդվածում բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության փաստի, հետեւաբար, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման՝ դատական կարգով բողոքարկման եւ առաջացած վեճերը դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու իրավական հնարավորությունը, որը

կարելու է երաշխիք է նաև ՆՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված անձի իրավունքների պաշտպանության նպատակով:

ՆՏ Սահմանադրության 85 եւ 89 հոդվածներում սահմանված է ՆՏ կառավարության, որպես գործադիր իշխանության մարմնի, սահմանադրաիրավական կարգավիճակը, որի բովանդակությունից է անմիջականորեն բխում այն լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման բնագավառում, որը նախատեսված է «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքում:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքում ոչ ամբողջությամբ են արտացոլված սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՌ-630 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես.

ա/ օրենքում չեն իրացվել սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՌ-630 որոշման 10-րդ կետի 5-րդ եւ 11-րդ պարբերություններում ամրագրված իրավական այն դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «Օրենքը պետք է սահմանի հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որոշակիացնելով. «իրավաչափ նպատակի համար սեփականության փարբեր օբյեկտների օտարման առանձնահատկությունները»,

բ/ օրենքում չի իրացվել սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՌ-630 որոշման 10-րդ կետի 13-րդ պարբերությունում ամրագրված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ սեփականափիրոջ եւ պետության (ի դեմս նրա լիազոր մարմնի) միջեւ կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման եւ համարժեք փոխհատուցման պայմանագիր, որում պետք է հստակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաև այն պայմանը, որ նման պայմանագրով փրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ»:

Նաշվի առնելով, որ թեև վերոհիշյալ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության հիմնավորումն անմիջականորեն պայմանավորված չէ սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականության խնդրով, այնուամենայնիվ, «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ օրենքում սահմանադրական դատարանի

18.04.2006թ. ՄԴՈ-630 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ ամբողջությամբ արտացոլված լինելու հանգամանքն իր արտացոլումն է գտնում իրավակիրառական պրակտիկայում ծագող փարաբնույթ վեճերում, որոնց հաղթահարումը հետագա օրենսդրական հստակեցումների անհրաժեշտություն ունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի (2006 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ) 3 հոդվածի 1-ին մասը, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը, 6 հոդվածը, 7 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը՝ ՆՏ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՄԴՈ-630 եւ սույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 հուլիսի 2009 թվականի
ՄԴՈ-815